ԱՆՆԱ ՕՎՉՅԱՆ
ANNA OVCHYAN

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ընտանիքը երեխայի կյանքի և զարգացման կարևորագույն օղակն է: Ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտը ներազդում է ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի, հատկապես երեխաների վրա: Ժամանակակից ընտանիքներում հանդիպող բարդ խնդիրները ցույց են տալիս, որ մարդու սեռական և սոցիալական հասունության հասցնելը նպաստավոր ընտանիք լինելու ցուցանիշ չէ:

Վերջին տասնամյակում կոտրվել է երեխաների՝ պետության և հասարակության կողմից պաշտպանվող ամենաարտոնյալ դաս լինելու առավել կայուն առասպելներից մեկը: Երեխաների հանդեպ բռնության աճի միտում ցուցաբերող դեպքերի կարելի է հանդիպել ցանկացած պահի, ցանկացած իրավիճակում, դպրոցում, հանգստի ժամանակ, հասարակական վայրում: Անգամ ընտանիքն այստեղ բացառություն չէ, չնայած, որ այս սոցիալական ինստիտուտը կոչված է ապահովելու երեխայի զարգացման համար անհրաժեշտ գործոն հանդիսացող անվտանգությունը [1- էջ 16-17]:

Ընտանեկան բռնությունն առկա է հասարակության բոլոր շերտերում և բնակչության խմբերում ռասայական, մշակութային, կրոնական և սոցիալ-տնտեսական գործոններից անկախ: Ընտանիքում երեխայի հանդեպ սիրո բացակայությունը նրա նկատմամբ դաժան վերաբերմունքի արտահայտումներից մեկն է համարվում, քանի որ ընտանիքը կարևոր տեղ է զբաղեցնում երեխայի անձի ձևավորման հարցում: Ինչպես նշվում է «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում» (ընդունված՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1989թ.), մարդկային ցանկացած էակ մինչև 18 տարեկան լրանալը երեխա է համարվում, հետևաբար նշված տարիքային խմբի անձի հանդեպ ցանկացած տեսակի բռնություն երեխայի հանդեպ բռնություն է [2 - էջ 424]:

Բռնությունը հարազատի կողմից, որից երեխան մշտապես հենարան և աջակցություն է ակնկալում, հոգեբանական և ֆիզիկական ավելի մեծ վնաս է հասցնում, քան օտարի կողմից: Խախտվում է ընտանիքի հիմնական բոլոր անդամների դրանում անվտանգ գոյության, սկզբունքը [3- էջ 74]:

Երեխաների հանդեպ բռնությունը գոյություն է ունեցել մարդկության պատմության ամբողջ ընթացքում: Տարբեր դարերի ընթացքում, երեխայի հանդեպ վերաբերմունքի անթույլատրելի ձևերի մասին պատկերացումներն

էականորեն տարբեր են եղել: Երեխայի նկատմամբ մարդկային վերաբերմունքի անհրաժեշտության մասին պատկերացումները ձևավորվել են միայն 18-րդ դարում: Մինչ այդ, ծնելիության չափազանց բարձր ցուցանիշը հանգեցնում էր նրան, որ ընտանիքներում ծնվում էին ավելի մեծ թվով երեխաներ, քան ծնողներն ի վիճակի էին կերակրել և դաստիարակել: Այդ հանգամանքը պայմանավորում էր երեխաների սպանության դեպքերի տարածվածությունը և դրա հանդեպ հասարակության հանդուրժողականությունը:

Պատմության վաղ շրջանում կարելի է գտնել մանկության թույլ պաշտպանվածության վկայություններ, երբ մահվան, բռնության զոհ դառնալու կամ անտեսված լինելու վտանգը չափազանց բարձր էր: Երեխան կյանքի իրավունքն ի ծնե չէր ստանում: Այդ իրավունքը շնորհվում էր հայրության ճանաչման ծեսի ժամանակ: Որոշ դեպքերում ճանաչմանը նախորդում էր երեխայի կենսունակության փորձությունը, ինչի արդյունքում թույլ երեխաները մահանում էին [4 - էջ 6]:

Ներկայացնենք ամերիկացի գիտնական Լլոյդ դե Մոզի [5- էջ17-24] երեխայի հանդեպ դաժան վերաբերմունքի յուրօրինակ պատմական տիպաբանությունը, որը հնարավորություն կտա մեզ ավելի լավ պատկերացնել երեխայի հանդեպ գոյություն ունեցող վերաբերմունքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում.

1. Որդեսպանություն կամ ինֆանտիցիդ, որը բնորոշ է անտիկ շրջանին ընդհուպ մինչև մ.թ. 4-րդ դարը: Համարվում էր, որ երեխան չունի հոգի, «կարևոր» չէ, հետևաբար նրանից կարելի է ազատվել: Այդ ժամանակահատվածը բնորոշվում է զանգվածային որդեսպանությամբ և բռնությամբ: Որդեսպանությունը իրավական և բարոյական նորմերի խախտում չէր համարվում: Նախնադարում ծնողները նույնիսկ երեխաներին զոհաբերում էին կամ ուտում նրանց:

2. Լքվածությունը հատուկ է եղել մ.թ. 4-13-րդ դդ.: Այս ժամանակներում ևս երեխան մնում է ընտանեկան ագրեսիայի օբյեկտ, նրան հաճախ հանձնում էին մենաստաններ, ծծմորը կամ օտար ընտանիքի:

3. Հակասականության կամ ամբիվալենտ ոճ, որը տարածված է եղել 14-17-րդ դդ.: Երեխան դեռ չէր ընկալվում որպես ընտանիքի լիիրավ անդամ հոգևոր և ինքնուրույն անհատ,անհատականություն, դաստիարակության մեջ գերակայում էր բնավորության «կոփումը», այսինքն երեխայի բնավորությունը ձևավորվում էր մեծերի նախապատվություններին համաձայն:

4. Պարտադրողական ոճը տարածված է եղել 18-րդ դարում: Երեխան ծնողներին ավելի մոտ էր դարձել, սակայն ծնողները վերահսկվում էին երեխայի վարքը և ներաշխարհը: Երեխաներին վերահսկելու, նրանց ավելի ենթարկվող դարձնելու համար հաճախ դիմում էին ահաբեկմանը: Երեխաներին

ցուցադրում էին մշտապես նրանց առևանգելու, ուտելու և մաս-մաս անելու պատրաստ գիշերային դևերի և վհուկների պատկերներ:

5. Սոցիալականացումը կամ սոցիալականացման ոճը հատուկ է 19-րդ դարին: Այս ժամանակաշրջանում երեխան ընկալվում էր որպես դաստիարակության և ուսումնառության օբյեկտ. ծնողների հիմնական ջանքերն ուղղված էին կամքի դաստիարակմանը և ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը: Սակայն, ընդհանուր առմամբ, հասարակության վերաբերմունքը մնում էր ոչ միանշանակ, իսկ արդյունաբերության զարգացումը նպաստեց երեխաների հանդեպ բռնության տնտեսական ձևի զարգացմանը: Երեխաները ստիպված էին, մեծերի հետ հավասար, աշխատել գործարաններում, հաճախ՝ օրական 14-ից 16 ժամ:

6. Օգնության կամ օգնող ոճը տարածվել է սկսած 20-րդ դարից մինչև մեր օրերը: Ծնողները ձգտում են ապահովել երեխայի անհատականության զարգացումը, հարաբերություններում գերակայում են զգացմունքային կապը և քաջալերանքը:

Երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի ուսումնասիրությունը սկսվել է բժշկության, իրավաբանության և փիլիսոփայության մեջ: Ըստ այդմ կարելի է տարանջատել չորս փուլ.

Առաջին փուլ: Դատաբժշկության պրոֆեսոր Ամբրոուզ Տարդյեն նկարագրեց բռնության բժշկական հատկանիշները: Նրան հետևեցին այլ մանկաբույժներ՝ Պորիստոնը 1929թ., Կասեյդը 1929թ., որոնք զեկուցում էին երեխաներին բազմակի մարմնական վնասվածքների հասցման դեպքերի մասին:

Երկրորդ փուլը անմիջականորեն կապված է ռենտգենաբանության զարգացման հետ, որը հնարավորություն ընձեռեց երեխաների հանդեպ բռնության մասին նոր տվյալներ ստանալ՝ բացահայտելով հին արյունազեղումների և կոտրվածքների հետքեր:

Երրորդ փուլը կապված է 1962թ. ամերիկացի մանկաբույժ Հենրի Կեմպեի անվան հետ, երբ նա իր գործընկերների հետ Դենվերում կազմակերպեց «Ծեծի ենթարկված երեխայի սինդրոմ» թեմայով գիտաժողովներ, որտեղ ընդունեց, որ երեխայի հանդեպ բժշկի պարտականությունն ու պատասխանատվությունն է խնդրի լիարժեք գնահատումը և վնասվածքի հետագա կրկնության կանխարգելման երաշխավորումը: Հենց այդ կոնֆերանսի ընթացքում, Կեմպեի գլխավորությամբ կազմակերպվեցին տուժած երեխաներին օգնություն ցուցաբերելու համար բազմապրոֆիլ մասնագետների առաջին խմբերը:

Չորրորդ փուլը ընդգրկում է 70-ականների վերջը, երբ «ծեծի ենթարկված երեխայի սինդրոմ» հասկացությունն ընդլայնվեց[6]:

Երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի և նրանց հիմնական կարիքների անտեսման վերաբերյալ առաջին միջազգային համաժողովը տեղի է ունեցել 1976թ.-ին Ժնևում: Համաժողովում գերակա դիրք գրավեց խնդրին համալիր մոտեցումը, կարևորվեց համապատասխան ինստիտուտների երեխաների պաշտպանության գործակալությունների, հոգեբանական ծառայությունների, իրավական համակարգի, դատարանների և ոստիկանության ստեղծման անհրաժեշտությունը: Նույն ժամանակահատվածում Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի երկրների մեծ մասում ընդունվեցին երեխաների պաշտպանությանն ուղղված մի շարք օրենսդրական ակտեր:

1989 թ. Միացյալ Ազգերի Կազմակերպությունն ընդունեց «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան»: Երեխաներին բռնությունից պաշտպանելու կոչված առաջին օրենքները ստեղծվել են հարյուրամյակներ առաջ: Դա կապված էր թե երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի աշխարհում տարածման, թե դրա հետևանքների ծանրության հետ [4- էջ 12-13]:

Ներկայումս երեխաների հանդեպ բռնության և դաժան վերաբերմունքի խնդիրը մի քանի գիտակարգերի ուշադրության կիզակետում է: Խնդիրն ուսումնասիրվում է պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մանկավարժության, իրավաբանության և բժշկական գիտությունների շրջանակներում: Այս գիտակարգերից յուրաքանչյուրը հիմնվում է իր սկզբունքների, կատեգորիաների, ավանդույթների վրա և կիրառում այս խնդրի հետազոտության իրեն բնորոշ մեթոդները՝ հարստացնելով և փոխլրացնելով միմյանց [7] :

Սակայն մինչ գիտակարգերին անդրադառնալը ներկայացնենք որոշ տերմինաբանական մեկնաբանություններ, քանի որ երեխաների հանդեպ բռնության մասին խոսելիս հաճախ երկու հիմնական հասկացություններ են օգտագործվում. ընտանեկան բռնություն երեխայի հանդեպ (անգլ.՝ abuse բռնություն, չարաշահում) և երեխաների հանդեպ դաժան վերաբերմունք (անգլ.՝ maltreatment վատ, թերի խնամք) [1- էջ 24] :

Լայն իմաստով, «ընտանեկան բռնություն» ասելիս ենթադրում ենք կնոջ, ծերունու, երեխաների հանդեպ դաժան վերաբերմունք, ընդ որում, այն ընդունում է տարբեր ձևեր (ֆիզիկական, հոգեկան, սեռական): Նեղ իմաստով, «ընտանեկան բռնություն» ասելիս կարելի է հասկանալ երեխայի, կնոջ կամ տարեց մարդու հանդեպ դաժան վերաբերմունք, այսինքն՝ բռնություն գոյություն ունեցող օբյեկտներից մեկի հանդեպ:

Եթե ընտանեկան բռնությունը ենթադրում է բռնի գործողություն ընտանիքի ներսում, անկախ նրանից ընտանիքի անդամները միասին են ապրում, թե՝ ոչ, ապա տնային բռնությանը բնորոշ է ընտանիքի անդամների համատեղ կեցությունը՝ ընդհանուր տարածքում [8 - էջ 13]:

Ընտանեկան բռնությունը անհատի կողմից իր հետ սեռական կամ այլ նշանակալի կապի մեջ գտնվող մյուս անձի հանդեպ ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վիրավորանքի կամ բռնության գործողությունն է կամ դրա սպառնալիքը [2 - էջ 419]:

Բռնությունը նաև ծնողների կողմից իրենց ծնողական պարտականությունների անտեսումն է, անուշադրությունը, հուզական անտարբերությունը, սեփական երեխաների հանդեպ կոպտությունը, մարդկային արժանապատվության ստորացումը և անձնական հույզերի ներքին սահմանների ցանկացած խախտումը [1- էջ 27-28]:

«Դաժան վերաբերմունք» հասկացությունը մեկ սահմանում չունի: Բոլորի կողմից ընդունված ընդհանրացնող սահմանման բացակայության առաջին պատճառն այն է, որ դաժան վերաբերմունքի սահմանումը պետք է ընդգրկվի երկրի ազգային օրենսդրության մեջ և պետք է հաշվի առնի դրա էթնիկ, մշակութային, պատմական, կրոնական և հասարակական առանձնահատկությունները [7- էջ 8-40]:

Տարբեր մշակույթներում դաժան վերաբերմունքի սահմանումներն ընդգծում են ծնողների վարքի մասնավոր ասպեկտները: Երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի հանդեպ ցանկացած գլոբալ մոտեցում պետք է հաշվի առնի, որ ծնողների վարքի նորմերի մասին պատկերացումները տարբեր մշակույթներում տարբեր են: Չէ որ մշակույթը հասարակության ընդհանուր ֆոնդն է, որն ընդգրկում է մարդկանց հավատալիքները, վարքի տարբեր տեսակները և մարդկանց վարքագծի մասին պատկերացումները: Այդ պատկերացումները ներառում են նաև այն գործողությունները կամ դրանց բացակայությունը, որոնք ընկալվում են որպես դաժան վերաբերմունք [9- էջ 61-85] :

Նշենք, որ մշակութային գործոնները զգալիորեն ազդում են ծնողների կողմից ֆիզիկական և ոչ ֆիզիկական պատժմամիջոցների ընտրության վրա, որոնք այլ մշակույթները կրողների կողմից կարող են դիտարկվել որպես անընդունելի:

Չնայած «դաժան վերաբերմունքի» մեկ ընդհանուր սահմանման բացակայությանը, բռնության ֆենոմենի ընկալման «աղոտ» լինելուն և անորոշությանը, արտասահմանյան գիտական գրականության մեջ, այդուհանդերձ, այս հասկացությունն ընդունվել է տուժած երեխաներին օգնություն ցուցաբերած բժիշկների և հոգեբանների կողմից:

Երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի (որն իրենից բռնության մասնավոր դեպք է ներկայացնում) ամենահակիրճ, բայցևայնպես, ամենաճշգրիտ սահմանումը տվել է Դ. Գիլինը. «դաժան վերաբերմունքը երեխայի

ֆիզիկական կամ հոգեբանական ներուժի իրականացմանը խոչընդոտող գործողություններն են» [7]:

Այսպիսով, երեխաների հանդեպ բռնությունը և դաժան վերաբերմունքը միշտ եղել է կոնկրետ-պատմական երևույթ պայմանավորված տնտեսական և սոցիալ-մշակութային հանգամանքներով: Հասարակությունն աստիճանաբար գիտակցել և ձևակերպել է երեխաների նկատմամբ բռնությունը, դաժան վերաբերմունքը և հիմնական կարիքների անտեսումը որպես հասարակական խնդիր:Այժմ ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության հիմնախնդիրը հանդես է գալիս որպես ժամանակակից հասարակության ամենասուր և արդիական խնդիրներից մեկը:

Գրականության ցանկ

[1]Защита детей от жестокого обращения / Под ред. Е. Н. Волковой. – СПб : Питер, 2007-256 с.

[2]Психологические проблемы современной семьи / В. М. Целуйко – Екатеринбург: У-Фактория, 2007 – 496 с.

[3] Проблемы насилия над детьми и пути их преодоления / Под ред. Е. Н. Волковой. - СПб.: Питер, 2008 – 240 с.

[4] Предотвращение жестокого обращения с детьми. – Пермь, 2009 – 109 с.

[5] / Психоистория – Ростов-на-Дону: «Феникс», 2000. – 512 с.

[6] Григорович И.Н., Павлова Н.Г. Синдром жестокого обращения с детьми: Памятка. — Петрозаводск, 1998. 264с.

[7] Цымбал Е. И. Жестокое обращение с детьми: причины, проявления, наследования, учебное пособие / Российский благотворительный фонд «Нет алкоголизму и наркомании» (НАН. – М. 2002 – 166 с.)

[8] Смагина М. В. Защита детей от семейного насилия в современном российском обществе: Монография. – Ставрополь: Изд-во СГПИ – 2008 – 124 с.

[9] Насилие и его влияние на здоровье / Доклад о ситуации в мире / Под ред. Этьенна, Г. Круга и др. / Пер. С англ. – М.: Изд-во «Весь Мир», 2003 – 376 с.

Post –graduate student of the chair of developmental and applied psychology

Thus, violence and cruel-treatment towards children has always been a specific historical phenomenon, caused by economic and socio-cultural circumstances.The society gradually realize that violence towards children, cruel-treatment and neglect of basic needs as a social problem.

Violence towards the children in the family as one of the sharpest and actual problems in the modern society.